ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1953 Общественные науки

Ի. ՐԱՖՈՒ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ՍՍՌՄ-ՈՒՄ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆԸ

1953 թ. հունվարի 5—7-ը տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտական սեսիան՝ նվիրված Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատությանը։ Ներածական խոսքով նիստը բաց արեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը։ Կանդ առնելով Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության նշանակության վրա՝ գիտության բոլոր ճյուղերի համար, ընկ. Համբարձումյանը մասնավորապես նշեց, որ մարքսիզմի տեսակետից բնության ու հասարակության օրենքների խնդիրը մշակելով, ընկեր Ստալինը ջախջախիչ հարված հասցրեց գիտության մեջ իդեալիզմի և վոլյունտարիզմի բոլոր արտահայտություններին։ Օրինակ, ֆիզիկայի բնագավառում իդեալիստները, հանձինս այսպես կոչված «կոպենհագենյան դպրոցի», փորձում են հաստատել, որ ֆիզիկայի օրենքները սուբյեկտիվ են։ Այժմ ստանալով այնպիսի դենք, ինչպիսին է ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունը, սովետական գիտնականները պետք է ուժեղացնեն իրենց պայքարը իդեալիզմի դեմ, գիտության բոլոր բնագավառներում։ Ընկեր Ստալինի այդ աշխատությունը վճռական նշանակություն ունենալով քաղաքատնտեսության բազմաթիվ պրոբլեմների լուծման համար, մարքսիստական գիտությունը բարձրացնում է նոր, ավելի բարձր աստիճանի վրա։ Այդ աշխատությունը միաժամանակ ցույց է տալիս մեզ այն ուղին, որը տանում է մեր հասարակությանը դեպի ամենաբարձր նպատակի իրագործումը՝ դեպի կոմունիզմ։

Ընկ. Համբարձումյանի ներածական խոսքից հետո կարդացվեցին հետևյալ զեկուցումները՝ «Ի. Վ. Սաալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատությունը մեծագույն ավանդ է մարքսիզմ-լենինիզմի թեորիայում»։ Զեկուցող՝ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Մ. Գ. Ներսիսյան։ «Ընկեր Ստալինը տնտեսական օրենքների բնույթի մասին՝ սոցիալիզմի ժամանակ»։ Զեկուցող՝ պրոֆ. Զ. Գ. Բաշինջաղյան։ «Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության նշանակությունը հասարակական զարգացման իդեալիստական կոնցեպցիաների դեմ մղվող պայքարում»։ Զեկուցող՝ փիլ. դիտ. դոկտոր Խ. Ն. Մոմջյան։ «Բարձրագույն տեխնիկական սոցիալիստական արտադրության զարգացման հիմքն է»։ Զեկուցող՝ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ «Ա. Ղ. Իոսիֆյան։ «Ընկեր Ստալինը միասնական համաշխարհային շուկայի տրոհման և երկու զուգահեռ համաշխարհային շուկաների առաջացման մասին»։ Զեկուցող՝ տնտեսագիտ. գիտ. թեկնածու Ս. Շ. Զուբարյան։ «Ընկեր Ստալինի ուսմունքը կոլտնտեսային սեփականությունը համաժողովրդական սեփականության մակարդակին բարձրացնելու մասին»։ Զեկուցող՝ տնտեսագիտ. գիտ. թեկնածու Ար. Հ. Մարուխյան։ «Ի. Վ. Ստալինի «Սոցիալիզմի տնտեսական պրոբլեմները ՍՍՌՄ-ում» աշխատության նշանակությունը կենդանի բնության օրենքների ճանաչման համար»։ Զեկուցող՝ ՀՍՍՌ ԳԱ իսկական անդամ Գ. Հ. Բաբաջանյան։ «Ընկեր Ստալինը արտադրողական ուժերի բնույթին, արտադրական հարաբերությունների պարտադիր համապատասխանության տնտեսական օրենքի մասին»։ Զեկուցող՝ տնտեսագիտ. գիտ. թեկնածու Ս. Ի. Խրիմլյան։ «Ժամանակակից կապիտալիզմի և սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքները»։ Զեկուցող՝ տնտեսագիտ. գիտ. թեկնածու Է. Ն. Տեր-Հակոբյան։

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ